ԼՐԱՏՈՒ · ХРОНИКА

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱԼ. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

1971 թ. դեկտեմբերի 13-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի, Հայաստանի կոմպոզիտորների միության և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի միացյալ գիտական նստաշրջանը՝ նվիրված հայկական սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր, հայ դասական երաժշտության ականավոր ներկայացուցիչ, մեծ կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի ծննդյան 100-ամյակին։

Բացման խոսքով հանդես եկավ արվեստի ինստիտուտի դիրեկտոր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ռ. Վ. Զարյանը, որը տվեց Սպենդիարյանի ստեղծագործության հակիրճ բնութագիրը և ընդգծեց այն խոշոր նշանակությունը, որ նա ունեցավ և շարունակում է ունենալ հայ երաժշտական ստեղծագործության զարգացման գործում։

«Ալեքսանդր Սպենդիարյանը և հայկական մշակույթը» թեմայով զեկուցեց արվեստագիտության թեկնածու Ք. Դ. Գրիգորյանը։ Նա ցույց տվեց, որ Սպենդիարյանն իր ամբողջ կյանքի ու գործունեության ընթացքում միշտ սերտորեն կապված է եղել հայ իրականությանը և Հայաստան փոխադրվելը հանդիսացավ այդ կապերի տրամաբանական արդյունքը։

Արվեստագիտության թեկնածու, դոցենտ Մ. Ա. Տերյանի զեկուցումը նվիրված էր կոմպոզիտորի «Երեք արմավենի» (ըստ Մ. Լերմոնտովի բանաստեղծության) սիմֆոնիկ պատկերին, որը ժամանակին արժանացավ Գլինկայի անվան մրցանակի։

Այնուհետև հանդես եկավ արվեստագիտության թեկնածու Ն. Կ. Թահմիզյանը։ Նրա զեկուցումը՝ «Ալ. Սպենդիարյանի երաժշտական լեզվամտածողության զարգացումը» թեմայով, ցույց տվեց այն էվոլյուցիան, որ ունեցավ կոմպոզիտորի երաժշտական ոճը՝ ընդհանուր եվրոպականից դեպի նոր արևելյանը՝ հիմնված հայ ժողովրդական երաժշտության օգտագործման վրա։

«Ալմաստ» օպերայի ժանրային հատկանիշների բնութագրության հարցերին նվիրեց իր զեկուցումը արվեստագիտության թեկնածու Դ. Շ. Գյոդակյանը։ Նա «Ալմաստը» բնութագրեց որպես դրամատիկական, խոր հոգեբանական օպերա, որի մեջ առկա է նաև հայրենասիրության թեման։

Արվեստագիտության թեկնածու Կ. Է. Սարգսյան-Խուդաբաշյանն իր զեկուցումը նվիրեց «Ալմաստ» օպերայի լիբրետիստ, բանաստեղծուհի Ս. Պատեկին և ցույց տվեց նրա կատարած նշանակալից աշխատանքը լիբրետոյի ստեղծման գործում։

Գիտական նստաշրջանում կարդացված վերջին զեկուցումը կրում էր «Մի էջ «Ալմաստ» օպերայի բեմական պատմությունից» վերնագիրը, որով հանդես եկավ արվեստագիտության թեկնածու Ռ. Ա. Աթայանը։

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԻՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆՆ ՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ

Իրանական պետության 2500-ամյակի կապակցությամբ Սովետական Միությունում իրականացվող գիտական միջոցառումները կոորդինացնող ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության հատուկ հանձնաժողովի նախաձեռնությամբ ս. թ. սեպտեմբերի 27—30-ը Լենինգրադում անց կացվեց գիտական նստաշրջան։

Իրանի պատմության կարևոր այս տարեթվի առթիվ գումարված գիտաժողովը կոչված էր Իրանի պատմության ու մշակույթի տարբեր հարցերի մշակման ճանապարհով ցույց տալու նաև սովետական մասնագետների կարևոր ավանդը իրանագիտության զարգացման գործում։

Զեկուցումները նվիրված էին հին և վաղ միջնադարյան Իրանի հիմնական փուլերին (Ա-

քեմենյան, Պարթևական, Սասանյան), նրա պատմության քաղաքական, մշակութային, սոցիալ-տնտեսական կողմերին։

Բացի այդ, նստաշրջանի նպատակն էր շոշափել Իրանի հարևան մի շարք երկրների պատմության հետ առնչվող հարցեր, ինչպես նաև ցույց տալ այդ երկրների կապը Իրանի հետ։

Նստաշրջանը բացեց ակադեմիկոս Բ. Բ. Գաֆուրովը (Մոսկվա), որը հանդես եկավ «Աքեմենյան տերությունը և համաշխարհային քաղաքակրթությունը» զեկուցումով։

Հանդիսանալով հինարևելյան վերջին պետությունը, Աքեմենյան Իրանը շատ բան ժառանգեց հինարևելյան աշխարհից, նրա մեծագույն նվաճումներից, որոնց վերամշակման եղանակով կարողացավ ստեղծել իր սեփական մշակույթն ու քաղաքակրթությունը։ Այնուհետև, նրա պետական կառուցվածքի որոշ առանձնահատկություններ, ներքին կազմակերպման առանձին դծեր, սոցիալ-տնտեսական մի շարք հաստատություններ և մշակութային երևույթներ փոխանցվեցին Հին Աշխարհի մի շարք պետությունների և ժողովուրդների, առաջին հերթին հելլենիստական պետություններին։

Ակադեմիկոս Բ. Բ. Պիոտրովսկու (Լենինգրադ) զեկուցումը («Վաղ սկյութական առարկաների հինարևելյան ոճի մասին») նպատակ ուներ մեկ անգամ ևս դրսևորելու Ասորեստանի ու հատկապես Ուրարտուի, ինչպես նաև Աքեմենյան Իրանի մշակույթի ու արվեստի ազդեցությունը մ. թ. ա. VI—IV դարերի սկյութական մի շարք գեղարվեստական ակնհայտ արժանիքներով օժտված ոսկե իրերի վրա, որտեղ յուրահատուկ ձևով համադրվում են հինարևելյան և սկյութական մշակույթները։

Ի. Մ. Դյակոնովի (Լենինգրադ) զեկուցման («Արևելյան Իրանը մինչև Կյուրոսը») մեջ քննության առնված հիմնական հարցերից մեկը հնդեվրոպական ցեղերի (մարերի և պարսիկների) Իրանական սարահարթ ներթափանցման ուղիների հարցն էր, որը, ինչպես հայտնի է, դեռևս լուծված չէ։ Զեկուցողի կարծիքով իրանական ցեղերը եկել են Միջին Ասիայի ու Խորասանի վրայով, տեղավորվելով այնտեղ, որտեղ IX դարից սկսած հանդիպում ենք մարերին, իսկ VII դարից՝ պարսիկներին, այսինքն Ուրմիա լճի շրջանում և Պարսից ծոցի մերձակայքում։

Մ. Ն. Բոգոլյուբովի և Վ. Ա. Լիֆշիցի (Լենինգրադ) զեկուցումները նվիրված էին Պարսկաստանի հռչակավոր մայրաքաղաքներից մեկում՝ Պերսեպոլիսում, պեղումների ընթացքում հայտնաբերված քարե սանդերի վրա պահպանված արամեական արձանագրությունների մեկնաբանմանը։ Նման սանդերում հատուկ բույսերից պատրաստվում էր պաշտամունքային նպատակներին ծառայող հառման՝ սրբազան խմիչքը։ Ելնելով այս հանգամանքից, որոշ գիտնականներ խոսում են այդ արձանագրությունների պաշտամունքային բովանդակության մասին։ Զեկուցողները պարզել են, որ Արախոզիայից՝ Աքեմենյան տերության միջինասիական սատրապությունից, որպես տուրք Պերսեպոլիս բերված անոթների վրա հանդիպող արամեական արձանագրությունները տնտեսական բնույթ ունեին և ծառայում էին հաշվառման նպատակներին։

Պարթևական պետությունում աքեմենյան ավանդույթների պահպանման մասին խոսեց Ն. Վ. Զեյմալը (Լենինգրադ)։ Աքեմենյան ավանդույթների դերը Առաջավոր Ասիայի մի շարք երկրների պետական հասարակական կյանքում քաջ հայտնի է, այդ են վկայում նաև Հայաստանի նյութերը։ Ոչ պակաս հետաքրքիր է աքեմենյան ավանդույթների գոյության փաստը բուն Իրանում՝ ետաքեմենյան պետություններում, Պարթևների և Սասանյանների մոտ։ Առաջադրված նպատակին զեկուցողը մոտեցել էր՝ որպես հիմք ընդունելով դրամագիտական նյութը։ Նրան հաջողվեց բերել հավաստի տվյալներ, որոնք խոսում են պարթևական դրամների հակառակ կողմի վրա հանդիպող նստած աղեղնավորի աքեմենյան ծագման մասին։ Պարթևական դրամագիտության մեջ լայն տարածում գտած այդ պատկերատիպը իր որոշակի, համոզեցուցիչ նախորդներն ունի աքեմենյան սատրապ Դատամեսի մ. թ. ա. IV դարում կտրված դրամների վրա։

Մեծ հետաքրքրություն առաջացրեց Կ. Ե. Սմիռնովի (Մոսկվա) հաղորդումը Բաշկիրիայում հայտնաբերված աքեմենյան ժամանակաշրջանի ներմուծված իրերի մասին։ Նրանց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում ալեբաստրե մի անոթ՝ եգիպտական գաղափարագրերով և աքեմենյան սեպագրերով կազմված արձանագրություններով, որոնք հիշատակում են Աքեմենյան Արտաքսերքսես արքային (հավանաբար, Արտաքսերքսես I-ին, մ. թ. ա. V դարի կես)։

Իրանական ծագում ունեցող իրերի հայտնաբերումը Ուրալյան լեռների մոտակայքում կամ նույնիսկ ավելի հյուսիս, նորություն չէ։ Իրանական մետաղե իրերը հնում գոյություն ունեցող առևտրական ճանապարհներով հասնում էին հյուսիսային երկրները մորթիների հետ փոխանակվելու համար։

Վրացական գիտական հիմնարկների ներկայացուցիչների զեկուցումները դրված էին հնագիտական նյութերի հիման վրա։ Օ. Դ. Լորդկիպանիձեն (Թբիլիսի) խոսեց Արևմտյան Վրաս-

տանի Վանիի հնավայրի պեղումներից հայտնաբերված ոսկե վարսակալի մասին, որի շեղանկյունաձև ծայրերի վրա դրվագված պատկերները հնարավորություններ են ընձեռում կուլտուրապատմական կարգի մի շարք դատողությունների համար։ Զեկուցողի կարծիքով հիշյալ իրը արտացոլում է Կողբիսի և Իրանի միջև գոյություն ունեցող մշակութային կապերը, քանի որ դրրվագված պատկերները հիշեցնում են Զիվիեկ, ինչպես նաև մարական ու աքեմենյան ժամանակաշրջանի արվեստի այլ գործերի վրա հանդիպող գեղարվեստական սկզբունքները։

Յու. Մ. Գալոշինեն (Թբիլիսի) պատմեց մ. թ. ա. V—III դարերի Արևելյան Վրաստանի խեցեգործության մասին, որը, որակապես տարբերվելով նախորդ ժամանակաշրջանների խեցեղենից, կրել է ուրարտական և իրանական խեցեգործության ազդեցությունը։ Ներկաները մեծ հետաքրքրությամբ դիտեցին նույն այդ ժամանակաշրջանին վերաբերող գունազարդ կավանոթների մի քանի նմուշների նկարները։

Ի. Դ. Ալիևը (Բաքու) հնագիտական, հատկապես դամբարանային նյութերի հիման վրա վերականգնել էր ալանա-սարմատական ցեղերի ճանապարհը Հյուսիսային Կովկասից մինչև Իրան։ Զեկուցողի կարծիքով այդ ճանապարհի մի հատվածն էլ անցնում էր Կուր գետի հովտով, ինչպես այդ վկայում են Մինգեչաուրի պեղումները։

Գ. Խ. Սարգսյանի (Երևան) զեկուցման մեջ ցույց էր տրված, որ պարթևների պատմության որոշ բացեր հնարավոր է մասամբ լրացնել հայ վաղ միջնադարյան աղբյուրների և առաջին հերթին Մովսես Խորենացու «Հայոց պատմության» տվյալներով։

Կ. Լ. Հովհաննիսյանը (Երևան) կանգ առավ Էրեբունի—Արինբերդի աքեմենյան ժամանակաշրջանի հուշարձանների վրա (սյունազարդ դահլիճ, հրո տաճարներ և այլ նյութեր), որոնք միաբերան վկայում են այդ հիշակված ուրարտական կենտրոնի մեծ նշանակության մասին նաև հետագա դարերում։

Դ. Ա. Տիրացյանի (Երևան) զեկուցումը կապված էր Աքեմենյան Հայաստանի ներքին պատմության մի քանի հարցերի հետ (սատրապի հողային տիրույթներ, արքունիքն ու գրասենյակը, սատրապության զինվորական կազմակերպությունը)։

Մի շարք զեկուցումներ նվիրված էին Իրանի վաղ միջնադարյան պատմությանը և մշակույթին Սասանյանների օրոք, ինչպես նաև միջինասիական մշակույթների հետ դրսևորվող առնչությունների ուսումնասիրման արդյունքներին։

Գիտական նստաշրջանին մասնակցում էր Իրանի գիտնականների պատվիրակությունը, որի մի շարք անդամներ հանդես եկան զեկուցումներով։

Ա. Նեգաճբաճը պատմեց Մարլիկում իր ղեկավարությամբ կատարված պեղումների մասին, որոնք տվել են ուշագրավ արդյունքներ։ Մարլիկի մշակույթը հայտնի է իր ինքնատիպությամբ և բազմազանությամբ, առանձին իրերի գեղարվեստական բարձր արժանիքներով։

Ս. Շաֆան, որը հայտնի է իրանագիտության պատմության ասպարեզում կատարած ուսումնասիրություններով, կանգ առավ սովետական իրանագետների աշխատությունների գնահատման ու ընդհանրացման հարցերի վրա։

Նստաշրջանի կապակցությամբ Պետական Էրմիտաժը Արևելքի բաժնի ջանքերով Գեորգիևյան դահլիճում կազմակերպեց իրանական նյութական մշակույթին և արվեստին նվիրված մեծ ցուցահանդես։ Էրմիտաժի աշխարհահռչակ նյութերի հետ միասին ցուցադրվել էին Միջին Ասիայի և Անդրկովկասի մի շարք թանգարանների նյութերը։ Այցելուները մեծ ուշադրությամբ էին դիտում Էրեբունիի թանգարանից բերված արծաթյա պտյակները (ոիտոնները), որոնք հայտնաբերվել էին 1968 թ. վերջերին Արինբերդի շրջակայքում։

Գ. Ա. ՏԻՐԱՑՅԱՆ

ԲՅՈՒՋԱՆԴԱԳԵՏՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ XIV ԿՈՆԳՐԵՍԸ

1971 թ. սեպտեմբերի 6—12-ը Բուխարեստում կայացավ բյուզանդագետների միջազգային XIV կոնգրեսը։ Նրա աշխատանքներին մասնակցեցին աշխարհի ավելի քան 30 երկրներից շուրջ 680 մասնագետներ, այդ թվում ՍՍՀՄ-ից՝ մոտ 40 հոգի։ Կոնգրեսը ակնբախ կերպով ցուցադրեց բյուզանդագիտության բուռն զարգացումը ամբողջ աշխարհում։

Ռումինական Սոցիալիստական Հանրապետության Պետական խորհրդի նախագահ Ն. Ջաուշեսկուի՝ կոնգրեսի մասնակիցներին ուղղված ուղերձում ընդգծված էր այն նշանակությունը, որ ունի անցյալի պատմության ուսումնասիրությունը, մասնավորապես բյուզանդագիտությունը, հատկապես այն ժողովուրդների համար, որոնք ժամանակին կրել են բյուզանդական